

Խորին ցաւակցութեամբ սրտի պարտաւորուած եմք հաղորդել մեր սիրելի եղբարց, որ Մեծանուն եւ Բազմարդիւն Վսեմ. Իշխ. Յովհաննէս Յօնանեանց պատուական անձի համանուն եւ երկրորդ որդին

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՆԱՆԵԱՆՅ

հինգ ամիս անտանելի հիւանդութեամբ տոգորուելով եւ չկարողանալով բժշկուիլ՝ ի 19 ն անցեալ Փետրվար ամսոյ իւր մահկանացու կենաց ընթացքը կնքեց եւ գիմեց ի յաւիտեանականութիւն՝ ի խորին տրտմութիւն եւ ի սուգ ընկղմեալ թողլով իւր սիրելի ծնողը՝ ընտանիքը՝ աղգականները եւ բարեկամները:

Պ. Յօնանեանցի երիտասարդական հասակում տարածամ մահը արդարեւ կարի վշտալի եւ կսկծառիթ՝ ինչպէս նաեւ իւր ծնողին եւ ընտանեաց համար մեծ կորուստ է: սակայն մարդկային տկար բնութիւնը Աստուածային նախասահմանութեան կամաց եւ տնօրէնութեանց առջեւ պարտի միշտ խոնարհիլ եւ հնազանդիլ՝ քաջ գիտնալով որ՝ Նովաւ է եւ կեայ, Նա կպարգեւէ եւ Նա կառնու: Մանաւանդ թէ մի եւ նոյն վճռոյն ենթարկուած է ամենայն մահկանացու անձն, որում այս աղցաւոր կեանքէն անշուշտ եւ անհամեմատ կերպով աւելի ցանկալի է յաւիտեանական կեանքը, բաւական է որ Տիրոջ կամաց եւ պատուիրանաց համաձայն առաքինասէր վարուք եւ բարեգործական յիշատակօք օժտուած եւ արժանաւոր լինի:

Արդ Վսեմ. Պ. Յօնանեանցին եւ բարեպաշտ ընտանեացն ի սփոփանս՝ Հոգւոյն սրբոյ մխիթարութիւնը մաղթելով՝ կսիրեմք յուսալ զի ճշմարիտ եւ հոգեսէր առաքինեաց նման եւ եռանդեամբ ի վիշտս աւելի ոգեւորուած կարիւնան Աստուծոյ սիրովը եւ բարեպաշտական ընթացիւք եւ բարեացառիթ արդեամբք կգօրանան եւ կմխիթարուին՝ ընդ մեզ միշտ աղաչելով զԱստուած՝ զի լուսաւորեսցէ զհոգի հանգուցելոյն եւ արժանացուցէ երկնից սուրբ Արքայութեան: